ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ։

Ամսոյս 14-ին կիրակի օրը կատարուեցաւ Կաթողիկէ Եկեղեցւոյս Ս. Էջմիածնի տօնը։

Այս առթիւ արժանաւոր մեծ հանդէս եղաւ Մայր Աթոռոյս մէջ, ինչպէս և ամեն տարի։

Միաբանութեան սեղանատան մէջ՝ յորում ներկայ էին համայն Ս. ուխտս և յառաջաւոր անձինք Վաղարշապատայ և ուխտաւորք և այլք, Գեր. Եղիազար Ս. Արք Եպիսկոպոս մի համառօտ և աւուր հանդիսի յարմար առենաբանութիւն խօսեցաւ. և Մայր Աթոռոյս հաստատութեան և Աղգօգուտ պայծառութեան համար բաժակներ առաջարկեց, և ամէն աղաղակներով վայելեցին հանդիսականք։

Նոյնպէս վասն կենաց առողջութեան և երկարութեան և վասն յաջողութեան ամենայն բարի նպատակաց և ձեռնարկութեանց Վ. Եր. Կաթողիկոսի՝ կեցցէ՞ ներով բաժակներ քամեցին։

Ի վերջոյ վասն սեղանակցաց և վասն համայն Հայ Աղգիս բաժակներ խմուելով վերջացաւ սեղանը։

ՆՈՒԷՐ

ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻ ՍՈՓԻԱ ՏԻԿՆՈՋ.

Ի նպաստ շինութեանց Մայր Աթոռոյս Տփխիսայ Աղգայիններէն Բարեպաշտուհի Սոփիա այրի Իշխանուհին Յովհաննէսեան Ռէկիթաբակեանց՝ նուիրեց երկու հարիւր բուբլի։

ԲԱՐԵԿ ՍԱՐԳԻՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ

Աշխարակայ Ս. Ամենափրկիչ Եկեղեցւոյ Բարեկրօն Սարգիս Աւագ Քահանայն՝ որ ինդրագրով իւրով ինքնայօժար սիրով յանձնառու եղաւ նոյն Եկեղեցւոյ մօտ եղած սենեկին մէջ Օրիորդաց Դպրոց բանալ, խոստանալով միանգամայն իւր արդիւնքէն հոգալ նոցա հարկաւոր եղած գրեանքը և այլ պիտոյքը, յաւուրկ օրհնութեան կոնդակաւ Նորին Ս. Օծութեան Վ. Եր. Կաթողիկոսի՝ թոյլտուութիւն ստացաւ իւր Աղգօգուտ և եռանդուն նպատակը և ջանքը 'ի գործ դնելու։

ՅՈՒՅՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն)

'Ի Ղանգիբասարոյ Գաւառէն

	Ռ.
Հասարակութիւն Փարաքար գեղջ . . .	20
Հասարակութիւն վերին Շէնգաւիթ գեղջ .	20
Հասարակութիւն Ներքին Շէնգաւիթ գեղջ	15
Հասարակութիւն Նորագաւիթ գեղջ . .	60
Ղևոնդ քահանայ Մինասարեան. Ռդ . .	2
Հախվերտի Բարագիւլեան. Ռդ	3
Հասարակութիւն Թաղայ գեղջ	125
Կարապետ քահանայ տէր Կարապետեան .	45
Գրիգոր Խուտկեարեան. Ռդ	25
Թարոյ Բաբայեան. Ռդ	15
Մահտեսի Մատթէոս Սողոմոնեան. Ռդ .	10
Յակոբ Կարապետեան. Ռդ	10
Ալահվերտի Բաբայեան. Ռդ	5
Հասարակութիւն Քալարայ գեղջ . . .	5
Հասարակութիւն Ջաֆարապատ գեղջ . .	10
Հասարակութիւն Վարմաղիար գեղջ . .	5